

ՄԱՅՐԵՒ ՄԱՆԿԻԿ



«Ամբ Տեառն է վերոյ երկեւորեաց իւրոց»
Սաղմոս. ԼԲ. 18.

Հիւանդ մանկան օրօրոցին նրստած քով
Յուրտ մէկ գիշեր՝ մայրիկն անձայն կ'աղօթէր,
Դէմբըն հիւծեալ, աչքըն լցուած արցունքով՝
Փափկիկ շրթամբ մընչէր, «Որդւոյս գրթա՛, Տէ՛ր»:
Սենեակն էր լուռ, իբրև անխօս գերեզման,
Հոն ոչ աղմուկ լըսուէր և ոչ մէկ շըռուկ,
Կանթեղ մ'աղօտ՝ չիջեալ հոգւոյ մի նրման
Տարածէր լոյս այն հիւղակին մէջ անշուք:

Մանկիկն անշարժ յօրօրոցին կիսանուաղ,
Թուէր արձան մոմէ, աղժգոյն և նիհար,
Աչեր մարած՝ կարծես հոգին իւր, աւա՛ղ,
Թռանէր խկոյն անբախտ թըռչնիկ վիրահար:

Մայր ցաւալի, ո՛ւր է կայտառ քո օրդին,
Ո՛ւր է Գրիգորդ, ո՛ւր այն մանկիկն եռանդուն,
Տես, սա միայն մընաց չըքնաղ այն վարդին.
Լաց, մայրիկ լաց, քիչ են արցունք, ո՛չ լաց դուն:

Լաց, ո՛հ, այժ, գուցէ Աստուած ողորմի.
Լաց, զի մանկիկդ անոյշ դառնայ քեզ նորէն.
Զորս հատ զաւակ գրբիր ի հող մի առ մի,
Այս հինգերորդն ալ մահուան թևք կ'որորեն:
Ի ծունր իջաւ քարերուն վրայ սըրտաբեկ,
Թևեր բացած՝ հոգւով գոչեց Աստուծոյ.
«Տէ՛ր, թէ զաւակս ինձ դարձունես դու երբէք
ես նահատակ ըլլամ քեզ, հող զիս դարձո՛ւ»:

Ո՛հ, ո՛վ կրնայ գուշակել կին դու թըշուառ
Թէ ինչ յայնժամ անցաւ սըրտէ՛դ մայրական.
Ինչէր արդեօք ըզգաց հոգիդ սիրավառ,
Ո՛րչափ ուխտեր, ո՛րչափ աղօթք զըղջական:
Սիրտն ուռելով հէքն ալ խօսիլ չըկըրցաւ,
Արցունք գէմքէն վար վազեցին իբր հեղեղ,
Գամ մի յերկին, դամ մ'ալ զաւկին նայեցաւ,
Անդէն անզօր ինկաւ գետին խելայեղ:

Կանթեղին լոյսն որ կը մարէր երթալով՝
Կէս մութի մէջ ցուցուց տըխուր մի պատկեր,
Մանկիկն հիւանդ, մայրն ալ մարած զաւկին քով,
Ողորմ տեսիլ, որ տեսնողին սիրտ ծակէր:

Իջիր իջիր ո՛վ գթութիւն երկնառաք
Յօղդ անմահին, անճառ սիրոյ քերովբէ,
Իջիր, ի բաց վանէ ըզմահ դառնորակ,
Թշուառ կընոյս այս և՛ձօր սիրտն ըսփոփէ:

Սենեակն յանկարծ կարծես մի լոյս ողողեց,
Եւ գեղադէմ աննիւթ հրեշտակ մի սիրուն,
Օրորոցին փոքրիկ կեցած եզեր յեց՝
Թեւովն հեղիկ դըպաւ մանկան աչերուն:
Ճիշտ նոյն պահուն շարժեցան մօրն ալ աչեր,
Եւ ի կուրծքէն թըռաւ հառաչ մի մեղմիկ.
Մինչգեռ մանկան ձայնիկն անոյշ մըրմընջէր,
«Մայրիկ, զարթի՛ր, ես քիչ մի լաւ եմ այժմիկ»:

ԿԱՐԱՊԵՏ Ռ. ՈՍԿԵԱՆ

Ե Ղ Ն Ի Կ

—*—*—



ԻՏ է անտառը. քարձր և տերեւախիտ են նորա ծառերը և գեղածաղիկները, երբ զարոնում են նորա մէջն է:

Իսկ երբ փչում է սառն քամին, երբ թափում են գեղնած տերեւները, երբ ձիւնը խիտ առ խիտ դիգում է ծառերի ճիւղերի վրայ, երբ ճիւղերը ծանրաբեռնուած խոնարհում են մինչև գետին, և ցնցելով իրենց կատարները ձնան փռում լեցնում են օդը, տխուր է նա, սոսկալի է, մութ և խորհրդաւոր...

Եւ ոչ մի շնչաւոր համարձակում է անցնել այն տեղից, առանց աչք առնելու մուրիլ և մնալ ձիւնալից մացառների մէջ...

* *

Սնտառի մօտ մի քարայր կ'ար, քարայրի մէջ մի եղնիկ, և այդ եղնիկը ունէր մի սիրուն փոքրիկ ձագիկ:

Մի առաւօտ փոքր եղնիկը շատ զարմացաւ, երբ տեսաւ որ իրենց բնակարանի մօտ և ամբողջ անտառը, որոյ թուփերը իւր զուարճութեան վայրերն էին, ծածկուել էին մի սառն սալիտակ սաւանով:

Ձիւն էր, որ գիշերն 'ի բուն տեղալով ծածկել էր մանր թփերն իսկ, որոց չուրջ մայր եղնիկը սիրում էր մամուռներ փնտռել իւր ձագուկի համար:

Այլ ևս չկայր մամուռ. մայր եղնիկը յափշտակուած իւր նոր ձագուկով, մոռացել էր պաշար ժողովելու:

— Գնանք անտառը, մոռածից նա, գուցէ գտնենք ուտելու մի բան: Շատ հոտոտաց ծառերի չուրջը պտըտելով, պեղեց ոտքերով, և վերջապէս գտաւ քանի մը դալար խոտեր, որոնցից բաժին հանեց իւր ձագուկի մանրիկ ատամներուն:

Բայց փոքրիկ եղնիկը հանգիստ չէր մնում. ուզում էր խաղալ այդ նորա տեսակ գետնի վրայ. վազվզում էր, կանգնած զարմանում էր, երբ իւր փոքրիկ ոտները խրում էին ձնան մէջ. մոտնում էր թփերի տակ, որոնց